ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 06-Ի ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան **«06» օգոստոսի 2026թ.**

2026 թվականի օգոստոսի 04-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) Կառավարման խորհրդի (այսուհետ՝ ԿԽ) նիստը՝ հեռակա քվեարկություն անցկացնելու միջոցով:

Օրակարգում ընդգրկված հարցերին վերաբերող համապատասխան նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Կառավարման խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգում ընդգրկված են հետևյալ հարցերը.

1. Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2025 թվականի 4-րդ և 2026 թվականի 1-ին եռամսյակների հաշվետվությունների ներկայացում և քննարկում.

2. Տեսչական մարմնի 2026 թվականի 1-ին եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման նախագծի քննարկում և հաստատում.

3. Տեսչական մարմնի գործունեության ոլորտում 2026 թվականի 6 ամիսների ընթացքում հանրությունից ստացված բողոքների վերաբերյալ հաշվետվության ներկայացում:

Կառավարման խորհրդի անդամների կողմից օրակարգի հարցերի վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

Քաղաքաշինության կոմիտեի նախագահի կողմից ներկայացվել են դիտարկումներ օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ, մասնավորապես.

1-ին հարցի վերաբերյալ- Առաջարկվել է քաղաքաշինության ոլորտում ուժեղացնել ավարտական ակտերի տրամադրման ժամկետների, չիրականացված ստուգումների հետագա ընթացքի և ստուգումների նյութերի պատշաճ ձևակերպման նկատմամբ վերահսկողությունը:

2-րդ հարցի վերաբերյալ- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի համակարգմամբ ներկայումս իրականացվում է լիցենզավորված անձանց վարկանիշավորման գործընթաց: Վարկանիշավորման մեջ կարևորվում են տեսչական մարմինների կողմից արձանագրված տույժերը, որոնք զգալի կշիռ ունեն վերջնարդյունքի ձևավորման համար: Վերոգրյալ գործընթացը ամբողջական իրականացնելու համար անհրաժեշտություն է առաջանում urban.e-gov.am հարթակում արտահայտել նաև լիցենզավորված և հավաստագրված անձանց

վերաբերյալ վարչական տույժերի տեսակները, ժամկետները և այլն: Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկվել է հետագայում դիտարկել բոլոր լիցենզավորված սուբյեկտների նկատմամբ վերահսկողական գործընթացների հնարավորությունը:

3-րդ հարցի վերաբերյալ- Քաղաքաշինության ոլորտի բողոքների մեծ տեսակարար կշիռը դիտարկել որպես ռիսկային ցուցանիշ և ներկայացնել դրանց պատճառների, քննության ժամկետների ու լուծման արդյունքների առանձին վերլուծություն:

Քվեարկությանը մասնակցեցին՝

Դ. Խուդաթյան - ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար (խորհրդի նախագահ)

Տ. Հակոբյան- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ

Ե. Վարդանյան- Քաղաքաշինության կոմիտեի նախագահ

Կ. Ցուցուլյան - ներքին գործերի նախարարի տեղակալ

Տ. Դաղունց- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ա. Ավանեսյանը- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ:

Ա. Գուգարաց- Կադաստրի կոմիտեի ղեկավարի պարտականությունները կատարող

Տ. Քեյան- «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի ներկայացուցիչ

Տ. Բաբայան- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ (համաձայնությամբ)

Դ. Սողոմոնյան- «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի հողաշինարարություն և հողային կադաստրի ամբիոնի ասիստենտ, համալսարանի գիտական խորհրդի անդամ, տեխնիկական գիտությունների թեկնածու

Քվեարկությանը չի մասնակցել՝

Ն. Հովակիմյան- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Վ. Հարությունյան- Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Քաղաքային տնտեսության և էկոլոգիայի ֆակուլտետի դեկանի ժ/պ, դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու:

Քվորում առկա է:

Օրակարգում ընդգրկված 1-ին հարցի վերաբերյալ խորհուրդը էլեկտրոնային քվեարկությամբ, ձայների «10» կողմ «0» դեմ համամասնությամբ քվեարկեց Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2025 թվականի 4-րդ և 2026 թվականի 1-ին եռամսյակների հաշվետվություններին:

Օրակարգում ընդգրկված 2-րդ հարցի վերաբերյալ խորհուրդը էլեկտրոնային քվեարկությամբ, ձայների «10» կողմ «0» դեմ համամասնությամբ հաստատեց Տեսչական մարմնի 2026 թվականի 1-ին եռամսյակի գործունեության կատարողականը:

Օրակարգում ընդգրկված 3-րդ հարցի վերաբերյալ խորհուրդը էլեկտրոնային քվեարկությամբ, ձայների «10» կողմ «0» դեմ համամասնությամբ քվեարկեց Տեսչական մարմնի գործունեության ոլորտում 2026 թվականի 6 ամիսների ընթացքում հանրությունից ստացված բողոքների վերաբերյալ հաշվետվությանը:

8/7/2026

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

Կառավարման խորհրդի նախագահ՝ Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274 Դ. Խուդաթյան

Կառավարման խորհրդի քարտուղար՝ Վ. Պոկացյան